ՀՐԱՀԱՆԳ

ԱՆԱՆԱՊԱՇԱԿԱՆ ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՖԵՐՄԱՆԵՐՈՒՄ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՅԵՎ ՎԱՐՁԱՏՐՄԱՆ ՄԱՍԻՆ

ՊԵՏՀՐԱՏ

05 FEB 2018

Հ. Խ. Ս. Հ.
ՀՈՂԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐԻԱՏ

ՀՐԱՀԱՆԳ

ԱՆԱՍՆԱՊԱՇԱԿԱՆ ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՖԵՐՄԱՆԵՐՈՒՄ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՅԵՎ ՎԱՐՁԱՏՐՄԱՆ ՄԱՍԻՆ

ՊԵՏՀՐԱՏ 1939 ԵՐԵՎԱՆ

ՀԱՅԿՈՄԿԱՏ ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ՀԱՍՍՐ
1-3802 գ/-

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է ԽՍՀՄ-Ի ՀՈՂԺՈՂԿՈՄԱՏԻ
13-Ը ՀՈՒԼԻՍԻ 1938 ԹՎԻ № 942 ՀՐԱՄԱՆՈՎ

ՀՐԱՀԱՆԳ

ԿՈԼՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԿԱԹՆԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՖԵՐՄԱՆԵՐՈՒՄ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՑԵՎ ՎԱՐՁԱՏՐՄԱՆ ՄԱՍԻՆ

1. Կաթնապրանքային ֆերմաներում բոլոր աշխատանքների կատարման համար կոլտնտեսության վարչությունը կոլտնտեսության անդամներից կազմում է վոչ պակաս 3 տարի ժամանակով՝ մշտական անասնապահական բրիգադ և ամրացնում նրանց անասուններ, անհրաժեշտ ինվենտար, քաշող ուժ և անասնապահական շենքեր։

Խոշոր ֆերմաներում կազմակերպվում են մի քանի բրիգադներ, յուրաքանչյուր բրիգադ սպասարկում է մոտավորապես 50-60 կով իր բոլոր հասակի մատղաշներով։

Առանձին դեպքերում կոլտնտեսության վարչությունը խոշոր ֆերմաներում կարող է կազմակերպել 6-7 ամսական հասակից բարձր

մատղաշների սպասարկման ինքնուրույն բրիգադ։

2. Բրիգադիրին և ֆերմայի վարիչին նշանակում է կոլտնտեսության վարչությունը 2 տարուց վոչ պակաս ժամանակով։

Մեկ բրիգադով սպասարկվող կաթնապրանքային ֆերմայում բրիգադիրը միաժամանակ հանդիսանում է վորպես ֆերմայի վարիչ։

3. Բրիգադի անդամների միջև աշխատանքը բաշխում է անմիջապես ինքը՝ բրիգադիրը, համաձայն Գյուղատնտեսական Արտելի Որինակելի կանոնադրության 14-րդ կետի։

4. Կոլտնտեսության վարչությունը սահմանում է յուրաքանչյուր բրիգադի համար տարեկան արտադրական առաջադրանք՝ վորքան կաթ պետք է կթվի, ստացվի հորթ և աճեցվի, յերբ և վորքան կով ու զուգավորման հասակի եգ մոզի պետք է ծածկվեն, այդ թվում վորքանը տոհմային ցուլերով, քանի գլուխ անասուն պետք է բովեն և արոտում գիրացվեն։

5. Կաթնապրանքային ֆերմաներում աշխատող կոլտնտեսականների աշխատանքը կազմակերպվում է գործարքի հիմունքներով, հաշվելով աշխորեր, նկատի ունենալով ստացված մթերքների վորակն ու քանակը (կաթ, միս, հորթերի և մատղաշների աճեցում)։

6. Գյուղատնտեսական արտելի կանոնադրության համապատասխան, կոլտնտեսության վարչությունը մշակում է և կոլտնտեսականների ընդհանուր ժողովը հաստատում, կաթնապրանքային ֆերմայի յուրաքանչյուր աշխատողի համար աշխատանքի գործարքային վարձատրման շափն աշխորերով և բարեխղճորեն աշխատող կոլտնտեսականին մատչելի աշխատանքի բեռնվածության նորմաները. հաշվի առնելով անասունների վորակը և վիճակը, ֆերմայի կահավորումը և մեխանիզացիան։

7. Բեռնվածության նորմաների և վարձաչափերի մշակման ժամանակ կոլտնտեսության վարչությունը ղեկավարվում է բեռնվածության և գործարքային վարձաչափերի հետևյալ որինակելի նորմաներով։

ԳՈՐԾԱՐՔԱՅԻՆ ՎԱՐՁԱՔԱՉԱՓԵՐԻ ՅԵՎ ԲԵՌՆՎԱԾՈՒԹՅԱՆ ՈՐԻՆԱԿԵԼԻ ՆՈՐՄԱՆԵՐԸ

Կթվոր տավարապահի համար բեռնվածության նորմաներ՝

ա) Կթվոր-տավարապահին ամրացվում է

վոչ պակաս 3 տարի ժամանակով 8-ից մինչև 14 կով և յերինջ (բարձրակիթ կովեր ամրացվում են քիչ ցածրակիթ կովեր շատ)։ Էրիվ բեռնվածությունից պակասող կովերի քանակը լրացվում է յերինջներից։

Յերինջները հանձնվում են կթվոր-տավարապահներին վոչ ուշ քան նրանց ծնից 4 ամիս առաջ։

Կթվոր տավարապահներին կովերի խնամելու լավագույն պայմաններ ստեղծելու համար, գոմերի մաքրելու, գոմաղբը դուրս տանելու, սիլոսի աշտարակից և խրամատից սիլոսի մասսահանելու և քուսպ ջարդելու աշխատանքը դրվում է տավարապահի վրա։

բ) Այն ֆերմաները, վորոնք ունեն կահավորված ծնարաններ պրոֆիլակտորիաներով, հորթերը ծնվելուց անմիջապես հետո աճեցնելու համար հանձնվում են հորթապահներին։

Այն ֆերմաներում վորտեղ չկան պրոֆիլակտորիաներ և հորթանոցը գտնվում է անմիջապես տավարի գոմի մոտ, հորթերի աճեցումը թույլատրվում է կթվոր-տավարապահին մինչև 15-20 որական հասակը, այն պայմանով, վոր պահպանվեն հորթերի աճեցման բոլոր պրոֆիլակտիկ միջոցառումները։

գ) Ֆերմաներում, վորտեղ հորթերն աճեցվում են մոր տակ, կթվոր-տավարապահը հորթն աճեցնում է մինչև նրանց կրծքից կտրելը։

Աշխատանքի վարձատրումն այն ֆերմաներում, վորտեղ հորթերը կերակրվում են ձեռքից—մայրերից անջատ։

Կթվոր-տավարապահին հաշվվում են աշխատանքներ՝

ա) Նրան ամրացրած խումբ կովերից կթած յուրաքանչյուր 100 լիտր կաթի համար 1,7-1,8 աշխատանք։

բ) Կովը ծնի նախապատրաստելու և նրանից առողջ հորթ ստանալու համար 5 աշխատանք։

Յեթե կթվոր-տավարապահը աճեցնում է հորթերին մինչև 15-20 որական հասակը, նրան հաշվվում են աշխատանքներ՝

Կովը ծնի նախապատրաստելու, նրանից առողջ հորթ ստանալու և մինչև 15-20 որական հասակն աճեցնելու համար—8 աշխատանք։

գ) Յերինջը ծնի նախապատրաստելու և նրանից առողջ հորթ ստանալու համար—7 աշխատանք։

Յեթե կթվոր-տավարապահն աճեցնում է հորթը մինչև 15-20 որական հասակը, նրան հաշվում են աշխատանքներ՝

Յերինջը ծնի նախապատրաստելու, նրանից առողջ հորթ ստանալու և մինչև 15-20 որական հասակն աճեցնելու համար՝ 10 աշխատանք։

դ) Ցուլով ծածկված յուրաքանչյուր կովի համար զուգավորումից հետո— 1 աշխոր

Բացի այդ, կովի հղիությունը վերջնական հայտարերելուց հետո լրացուցիչ հաշվվում է նորից 1 աշխոր։

ե) Ամբողջ խումբ կովերի մեջ ստերջության բացակայության համար (յուրաքանչյուր կովից տարվա ընթացքում առողջ հորթ ստանալը) 10 աշխոր։

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԱՐՁԱՏՐՈՒՄԸ Ֆերմաներում, ուր հորթերը խնամվում են մոր տակ կթվոր տավարապահին հաշվվում են աշխորեր՝

ա) Նրան ամրացված խումբ կովերից կթած յուրաքանչյուր 100 լիտր կաթի համար— 1,7-1,8 աշխոր։

բ) Ցուլով ծածկված յուրաքանչյուր կովի համար զուգավորումից հետո 1 աշխոր։

Բացի այդ, կովի հղիությունը վերջնական հայտարերելուց հետո լրացուցիչ հաշվում են նորից 1 աշխոր։

գ) Ամբողջ խումբ կովերի մեջ ստերջության բացակայության համար (յուրաքանչյուր կովից տարվա ընթացքում առողջ հորթ ստանալը) 10 աշխոր։

դ) Կովին կամ. յերինջին ծնի նախապատրաստելու և մինչև մորից կտրելը յուրաքանչյուր աճեցրած հորթի համար, նայած նրա գերությանը—12-15 աշխոր։

9. ԿՈՎԵՐԻ ՏԱՎԱՐԱՊԱՀ-ՀՈՎՎԻ ՀԱՄԱՐ

Տավարապահ-հովվին ամրացվում է 30-ից մինչև 50 կով։ Տավարապահ հովվին հաշվվում են աշխորեր՝

ա) Նրան ամրացված խումբ կովերից կթած յուրաքանչյուր 100 լիտր կաթի համար 0,5-ից մինչև 0,6 աշխոր.

բ) Նրա խումբ կովերից յուրաքանչյուր հաջող ծնի համար 1 աշխոր.

գ) ցուլով ծածկված յուրաքանչյուր կովի հղիությունը վերջնականապես հայտարերելուց հետո՝ 1 աշխոր.

դ) ամբողջ խումբ կովերի ստերջության բացակայության համար՝ 20 աշխոր։

Յեթե կովերի հետ միասին արածում են մի քանի գլուխ մատաղաշներ, այդ դեպքում նրանց արածացնելու համար սահմանվում է լրացուցիչ վճար մատաղաշների տավարապահ հովվի համար վորոշված վարձաչափերով։

10. ԱՐՏԱԴՐՈՂ–ՑՈՒԼԵՐ ԽՆԱՄՈՂ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Կաթնապրանքային ֆերմաներում, ուր կան 3 արտադրող ցուլից վոչ ավելին, նրանց խնամքը (կերակրումը, ջրելը, մաքրելը, զբոսանքի հանելը, թեթև աշխատանքի լծելը, զուգավորումն անցկացնելը) դրվում է բրիգադիրի կամ կովերի տավարապահ-հովվի վրա։

Ֆերմաներում, ուր կա 3 արտադրող-ցուլից ավելին, նրանց խնամելու համար առանձնացվում է առանձին տավարապահ։

Արտադրող-ցուլեր խնամող աշխատողին (բրիգադիրին կամ տավարապահին) հաշվվում են աշխատանքներ՝

ա) Արտադրող-ցուլով ծածկված յուրաքանչյուր կովի և զուգավորման հասակի եգ մատղաշի համար, ձեռնաքաշ զուգավորման դեպքում, նրանց հսիությունը վերջնականապես հայտաբերելուց հետո՝ 1,5 աշխատանք։

բ) Յուրաքանչյուր արտադրող-ցուլի կերակրելու, ջրելու, մաքրելու, զբոսանքի և թեթև աշխատանքի հանելու համար ամսական հաշվվում է 4 աշխատանք։

11. ՀՈՐԹԱՊԱՀԻ ՀԱՄԱՐ

Հորթապահն աճեցնում է հորթերը կթվորտավարապահից ստանալու որից մինչև 6 ամսական հասակը, ունենալով ըստ նորմայի 20-25 հորթի բեռնվածություն։ Հորթապահն առանձին հորթերի 6 ամսական հասակը լրանալուց, հանձնում է նրանց մատղաշներ խնամող տավարապահ-հովվին և լրացնում է հորթերի խումբը նորածին հորթերով։

Ֆերմաներում, վորտեղ չկա հորթապահի բավականաչափ բեռնվածություն, վերջինս հորթերն աճեցնում է մինչև տարեկան հասակը։

Յեթե հորթապահը կունենա կաթնային շրջանի 20-25 հորթ, այդ դեպքում նրանց լավ խնամելու նպատակով, կոլտնտեսության վարչությունը հորթապահին ոգնելու համար կարող է առանձնացնել ոգնական։

Ոգնականի պարտականությունների մեջ է մտնում՝ զոմաղբի մաքրելը, վանդակների մաքրելը, լվանալը և սպիտակացնելը, հորթանոցի հատակի լվանալը, ցամքարի նախապատրաստելը, ջրի տաքացնելը և այլ ոժանդակ աշխատանքներ։

Հորթապահին հաշվվում են աշխատանքներ՝

ա) Հորթապահին ամրացված խումբ հորթերից կենդանի քաշի յուրաքանչյուր 10 կիլոգրամ աճին 0,8 աշխատանք։

բ) Ծնվելուց մինչև 6 ամսական հասակն աճեցրած յուրաքանչյուր հորթի համար՝ 9 աշխոր։

գ) 15-20 որական հասակից մինչև 6 ամսական հասակն աճեցրած յուրաքանչյուր հորթի համար՝ 6 աշխոր։

Ֆերմաներում, ուր չի կազմակերպված հորթերի կշռելը, հորթապահի աշխորերի հաշվվումը կատարվում է՝

ա) յուրաքանչյուր հորթի խնամքի և աճեցման համար, նայած նրա զարգացմանը և գիրության ամսական 0 8-ից մինչև 1 աշխոր.

բ) Ծնվելուց մինչև 6 ամսական հասակն աճեցրած յուրաքանչյուր հորթի համար՝ 9 աշխոր.

գ) 15-20 որական հասակից մինչև 6 ամսական հասակն աճեցրած յուրաքանչյուր հորթի համար՝ 6 աշխոր։

Հորթապահի ոգնականին հաշվվում է աշխորեր՝ հորթապահի աշխատած միջին աշխորերի 50 ից մինչև 70 տոկոսի չափով։

Հորթերի կշռելը, նրանց գիրությունը և զարգացումը վորոշելը կատարվում է յուրաքանչյուր ամսվա վերջը, կոլտնտեսության վարչության կողմից նշանակված հանձնաժողովի միջոցով։

12. ՄԱՏՂԱՇՆԵՐ ԽՆԱՄՈՂ ՏԱՎԱՐԱՊԱՀ-ՀՈՎՎԻ ՀԱՄԱՐ

Մատղաշների տավարապահը սպասարկում է 30-ից 50 գլուխ՝ հորթապահից ընդունելու մոմենտից մինչև յերինջ դառնալու հասակը կամ բոման ու արոտային գիրացման հանձնելը։

Մատղաշներ խնամող տավարապահ-հովվին գրանցվում են աշխորեր՝

ա) նրանց ամբացված խումբը մատղաշների յուրաքանչյուր 10 կիլոգրամ կենդանի քաշի աճի համար.

բ) կոլտնտեսության վարչության կողմից սահմանված ժամկետում, զուգավորման հասակից յուրաքանչյուր եգ մատղաշի ծածկելու համար, նրա հղիությունը վերջնականապես հաստատելուց հետո՝ 1,5 աշխոր։

Այն կաթնապրանքային ֆերմաներում, վորտեղ կազմակերպված չէ մատղաշների կշռելը, հովիվ-տավարապահին աշխորերի հատկացումը կատարվում է՝

ա) յուրաքանչյուր գլուխ մատղաշի խնամքի և աճեցման համար, նայած նրա զարգացմանը և գիրությանը ամսական 0,6-ից մինչև 0,8 աշխոր։

բ) Կոլտնտեսության վարչության կողմից սահմանված ժամկետում, զուգավորման հասակի յուրաքանչյուր եգ մատղաշի ծածկելու համար նրա հղիությունը վերջնականապես հաստատելուց հետո՝ 1,5 աշխոր։

13. ԲՏՎՈՂ ՅԵՎ ԱՐՈՏԱՅԻՆ ԳԻՐՈՒԹՅԱՆ ԴՐՎԱԾ ԱՆԱՍՈՒՆՆԵՐԻՆ ԽՆԱՄՈՂ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Բավող և արոտային գիրության դրված անասուններին խնամող աշխատողներին հաշվվում են աշխորեր՝

ա) բավող (արոտում գիրացվող) խումբ անասունների կենդանի քաշի յուրաքանչյուր 10 կիլոգրամ աճի համար 1 աշխոր.

բ) այն ֆերմաներում, ուր կազմակերպված չե բավող և արոտում գիրացվող անասունների կշռելն, այդ անասունները սպասարկող աշխատողին հաշվվում են աշխորեր՝ յուրաքանչյուր գլխին ամսական—0,5 ից մինչև 1,0 աշխոր.

գ) մսի պարտավորության դիմաց, կամ կառավարությանը պետական գներով բուման կամ արոտային գիրացման վերջը հանձնած յուրաքանչյուր գլուխ անասունի համար՝

ճարպոտ գիրության՝ 5 աշխոր

մի ջակից բարձր գիրության՝ 3 »

14. ՖԵՐՄԱՅԻ ՎԱՐԻՉԻՆ, ԲՐԻԳԱԴԻՐԻՆ

ա) Մինչև 20 գլուխ կով ունեցող կաթնապրանքային ֆերմաներում, ֆերմայի վարիչ-բրիգադիրին հաշվվում և աշխոր սահմանված վարձաչափով նրան ամրացված անասունների համար և բացի այդ ֆերմայի աշխատանքների ղեկավարման համար լրացուցիչ՝ նրա աշխատած աշխորերի 20-30 տոկոսը։

բ) 20-կովից ավելի գլխաքանակ ունեցող ֆերմայի վարիչ-բրիգադիրին և խոշոր ֆերմաների վարիչներին հաշվվում են աշխորեր որակյան աշխատանքի համար—1-ից մինչև 1,5 աշխոր, նայած ֆերմայի մեծությանը, աշխատանքի ատաժին և աշխատողի վարակին.

գ) խոշոր ֆերմաների բրիգադիրին հաշվվում են յուրաքանչյուր որվա աշխատանքի համար աշխորեր 1-ից մինչև 1,25 աշխորի չափով, նայած աշխատանքի ծավալին և աշխատողի վարակին.

դ) բացի այդ տարվա վերջը ֆերմայի վարիչին և բրիգադիրին հաշվվում են աշխորեր այդ նույն խումբ կովերից անցյալ տարվա կաթից ավելի յուրաքանչյուր 100 լիտր կաթին 0,5-ից մինչև 1,0 աշխոր։

15. ՏԵԽՆԻԿ-ԱՆԱՄՆԱՊԱՀԻՆ ՅԵՎ ԱՆԱՍՆԱԲՈՒԺԱԿԻՆ

հաշվվում են յուրաքանչյուր որվա աշխատանքի համար 1-ից մինչև 1,5 աշխորի չափով.

նայած աշխատանքի ծավալին, աշխատողի սահմանին և վորակին։

16. Բրիգադում առանձնացվում և գիշերապահ-անասնապահ, վորը հսկում, պահպանում և անասուններին, հիվանդության կամ կովերի ծնելու դեպքում անմիջապես կանչում և բրիգադերին կամ կովկիթին։

Գիշերապահ-տավարապահի պարտականությունների մեջ է մտնում նաև գոմի մաքրելը, շենքի ողափոխելը, ջրի տաքացնելը։

Գիշերապահ-տավարապահին հաշվվում են կոլտնտեսականների ընդհանուր ժողովում սահմանվածի չափով աշխորեր, մոտավորապես կովկիթ-տավարապահի միջին աշխատած աշխորերի 50-ից մինչև 70 տոկոսի չափով։

17. Ֆերմայի մնացած աշխատողներին (կերփոխադրողներին, հաշվառներին և սույն հրահանգում չնշված մյուս աշխատողներին) կատարած աշխատանքի համար վարձաչափերն աշխորերով սահմանվում են կոլտնտեսության վարչության կողմից, հաշվի առնելով տեղական պայմանները և հաստատվում կոլտնտեսականների ընդհանուր ժողովի կողմից։

18. Գյուղատնտեսական արտելի օրինակելի կանոնադրության 15-րդ կետին համապատասխան՝ եթե անասնապահական բրիգադան իր լավ աշխատանքի հետևանքով ապահովում և կովերից բարձր կիթ, տավարի բարձր գիրություն, մատաղների լիովին պահպանում, այդ դեպքում տարվա վերջին արտելի վարչությունն այդպիսի բրիգադի անդամների յեկամուտն ավելացնում է աշխատած աշխորերի 10 տոկոսի չափով, բրիգադի աչքի ընկնող հարվածայիններին՝ մինչև 15 տոկոսի չափով, իսկ ֆերմայի վարիչին և բրիգադիրին՝ մինչև 20 տոկոսով։

Եթե անասնապահական բրիգադն իր վատ աշխատանքի հետևանքով տալիս է միջինից քիչ կիթ, տավարի ցածր գիրություն և մատաղների վատ պահպանում, այդպիսի դեպքում արտելի վարչությունը բրիգադի բոլոր անդամներից կրճատում-պակասեցնում է նրանց յեկամուտից աշխատած աշխորերի 10 տոկոսի չափով։

Ա 38029

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է ԽՍՀՄ-Ի ՀՈՂԺՈՂՆՈՄԱՏԻ 1-ԸՆԹՈՍՏՈՍԻ 1938 ԹՎԻ № 1042 ՀՐԱՄԱՆՈՎ

ՀՐԱՀԱՆԳ

ԿՈԼՏՆՏԵՍԱՅԻՆ ՎՈՉԽԱՐԱԲՈՒԾԱԿԱՆ ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՖԵՐՄԱՆԵՐՈՒՄ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՅԵՎ ՎԱՐՁԱՏՐՄԱՆ ՄԱՍԻՆ

1. Վոչխարաբուծական ապրանքային ֆերմաներում բոլոր աշխատանքների կատարման համար կոլտնտեսության վարչությունը կոլտնտեսության անդամներից կազմում է վոչ պակաս 3 տարի ժամանակով, մշտական վոչխարաբուծական բրիգադ և ամրացնում նրան վոչխարներ, անհրաժեշտ ինվենտար, քաշող ուժ և անասնապահական շենքեր։

Խոշոր ֆերմաներում կազմակերպվում են 3-4 հոգուց բաղկացած մի քանի բրիգադներ առանձին-առանձին վոչխարների սեռահասակային խմբերը սպասարկելու համար մայր վոչխարների, մատղաշների (շիշակների, խոյիկների) (մեծահասակ խոյերի և կրտված-վորձերի սպասարկման բրիգադ)։

2. Ֆերմաներում, վորտեղ վոչխարների քանակը չի թույլատրում մայր վոչխարներ, խոյեր, մատղաշներ և կրտված-վորձեր սպասարկող ինքնուրույն բրիգադներ կազմակերպել, հովիվների բրիգադը սպասարկում է վոչխարների բոլոր սեռահասակային խմբերը։

3. Վոչխարաբուծական ֆերմայի վարիչին և բրիգադիրին (ավագ հովվին) նշանակում է կոլտնտեսության վարչությունը, վոչ պակաս 2 տարի ժամանակով։

Մեկ բրիգադով սպասարկվող վոչխարաբուծական ֆերմայում բրիգադիր-ավագ հովիվը միաժամանակ հանդիսանում է վորպես ֆերմայի վարիչ և բրիգադի մյուս անդամներին համահավասար կատարում է բոլոր տեսակի աշխատանքներ։

4. Վոչխարաբուծական բրիգադում, բրիգադի անդամների միջև աշխատանքը բաշխում է անմիջապես ինքը՝ բրիգադիրը, համաձայն Գյուղատնտեսական արտելի Արքինակելի Կանոնադրության 14-րդ կետի։

5. Կոլտնտեսության վարչությունը սահմանում է յուրաքանչյուր բրիգադի համար տարեկան արտադրական առաջադրանքներ՝ վորքան բուրդ

պետք է խուզվի, մորթիներ ստացվի, վորքան գառ պետք է ստացվի և աճեցվի, վորքան մայր վոչխար և յերբ պետք է ծածկվի-սերմնավորվի, վորքան զլուխ վոչխար պետք է բռվի և արոտում գերացվի։

6. Վոչխարաբուծական ֆերմայում աշխատող կոլտնտեսականների աշխատանքը կազմակերպվում է գործարքի հիմունքներով, հաշվելով աշխոր, նկատի ունենալով ստացված մթերքների վորակն ու քանակը (բուրդ, մորթիներ, անասունների գիրություն, մինչև մորից կտրելն աճեցրած գառներ և մատղաշներ)։

7. Գյուղատնտեսական արտելի կանոնադրության համապատասխան կոլտնտեսությունն վարչությունը մշակում է և կոլտնտեսականների ընդհանուր ժողովը հաստատում, վոչխարաբուծական ֆերմայի յուրաքանչյուր աշխատողի համար աշխատանքի գործարքային վարձատրման չափն աշխորերով և բարեխղճորեն աշխատող կոլտնտեսականին մատչելի աշխատանքի բեռնվածության նորմաներ, հաշվի առնելով վոչխարների վորակն ու դրությունը, նրանց ցեղայնությունը, ֆերմայի մեծությունը և կահավորումը։

8. Բեռնվածության նորմաների և վարձաչափերի մշակման ժամանակ կոլտնտեսության վարչությունը ղեկավարվում է բեռնվածության և գործարքային վարձաչափերի հետևյալ որինակելի նորմաներով։

ԳՈՐԾԱՐՔԱՅԻՆ ՎԱՐՁԱՉԱՓԵՐԻ ՅԵՎ ԲԵՌՆՎԱԾՈՒԹՅԱՆ ՈՐԻՆԱԿԵԼԻ ՆՈՐՄԱՆԵՐԸ

9. Վորպես գործարքային վարձաչափերի և բեռնվածության նորմաներ առաջարկվում է՝

Ֆերմաներում, վորտեղ հովիվները սպասարկում են վոչխարների բոլոր սեռահասակային խմբերը՝ մեկ հովվին բեռնվածության նորմա յե սահմանվում 75-100 գլուխ, իսկ ռոմանովյան ցեղի վոչխար՝ 50-75 գլուխ։

Ֆերմաներում, վորտեղ հովիվը լիովին չի բեռնավորված, կոլտնտեսության վարչությունը տալիս է նրան ուրիշ աշխատանքներ, բայց վոչ է վնաս վոչխարների սպասարկման աշխատանքի։

Այն ֆերմաներում, վորտեղ կազմակերպվում են մայր վոչխարներ և մատղաշներ սպասարկելու բրիգադներ, մեկ բրիգադով սպասարկվող հոտի մեծությունը կարող է լինել մոտավորապես հետևյալը՝ նրբագեղմ վոչխարների

համար 400-600 գլուխ, կիսակոշտաբուրդերինը՝ 500-700 գլուխ, կոշտաբուրդ և մո թատու վոչխարների համար՝ 600-800 գլուխ։ Բոլոր հասակի կրտված-վորձերի հոտը՝ 750-1000 գլուխ։

10. Մայր վոչխարների հոտը սպասարկող բրիգադին հաշվվում են աշխորեր՝

1. խուզված յուրաքանչյուր կիլոգրամ բրդի համար՝

ա) նրբագեղմ վոչխարներից — 0 35 աշխոր

բ) կիսակոշտաբուրդ վոչխարներից—0,30 »

գ) կոշտաբուրդ վոչխաներից— 0,25 »

2. Արտադրող-խոյով ծածկած յուրաքանչյուր վոչխարի համար — 0,2 աշխոր.

3. Յուրաքանչյուր հաջող ծնած վոչխարի համար—0,6 աշխոր.

4. Մինչև մորից անջատելն աճեցրած յուրաքանչյուր գառան համար՝

ա) բոլոր ցեղերի, բացի ռոմանովյան և մորթատու ցեղերից—0,9 աշխոր.

բ) ռոմանովյան ցեղի—1,5 աշխոր.

գ) մորթատու ցեղի—1,2 աշխոր։

Մանոթություն 1. Մորթատու ցեղի գառներից մորթու համար մորթված յուրաքանչյուր գառանը հաշվվում է—0,8 աշխոր։

2. Արտադրական առաջադրանքով սահմանված քանակից ավելի մինչև մորից անջատելու հասակն աճեցրած յուրաքանչյուր գառան համար բրիգադին հաշվվում է 1,5 աշխոր։

3. Մինչև մորից անջատելու հասակն աճեցրած միջակից ցածր գիրության յուրաքանչյուր գառան համար բրիգադին հաշվվում է 0,3 աշխոր պակաս։

11. Վոչխարների բոլոր սեռահասակային խմբեր սպասարկող հովիվներին հաշվվում են աշխորեր նույն վարձաչափերով, ինչ վոր մայր վոչխարների հոտի հովիվներին։

Մանր ֆերմաներում, վորտեղ ծնի ժամանակ չեն առանձնացվում գառնարածներ, այլ գառներն աճեցնում են իրենք հովիվները, նրանց լրացուցիչ հաշվվում են աշխորեր գառնարածների համար սահմանված վարձաչափերով (տես 15-րդ կետը)։

12. Մայրերից անջատված մատղաշների և կրտված վորձերի հոտը սպասարկող հովիվներին հաշվվում են աշխորեր՝

ա) բրդի համար, 10-րդ կետում նշված վարձաչափերով.

բ) ամեն մի գլուխ վոչխարի արածացնելու և խնամքի համար ամսական՝

մատաղներին, անջատելուց հետո 0,10 աշխ.

կրտված-վորձերին » » 0 03 »

Բացի այդ՝ միջակից բարձր գիրություն ունեցող յուրաքանչյուր գլուխ վոչխարը ձմեռելու կանգնեցնելու, կամ պետության հանձնելու և ֆերմայից վաճառելու ժամանակ լրացուցիչ հաշվվում է 0,3 աշխոր։

Ծանոթություն—Վոչխարների գիրությունը վորոշվում է կոլտնտեսության վարչության կողմից նշանակված՝ հանձնաժողովի միջոցով. կազմված կոլտնտեսության վարչության անդամից, ՎԱՖ-ի վարիչից և տեխնիկ անասնապահից։

13. Բրիգադի աշխատած աշխորերը բաշխվում են հետևյալ կերպ՝ բրիգադի աշխատած յուրաքանչյուր 100 աշխորից բրիգադիրին գրանցվում է մոտավորապես 35 աշխոր, հովվի կրտսեր ոգնականին՝ 27 աշխոր, շարքային հովվին 23 աշխոր և սայլապանին՝ 15 աշխոր։

Ծանոթություն — Քանակով քիչ անդամ ունեցող բրիգադներում, անդամների միջև աշխորերի բաշխումը սահմանվում է կոլտնտեսության վարչության կողմից։

14. Խոշոր ֆերմաներում արտադրող խոյերն ամրացվում են ավելի փորձված հովվի։ Արտադրողներին խնամող կոլտնտեսականի աշխատանքի վարձատրման չափը սահմանվում է կոլտնտեսության վարչության կողմից, հաշվի առնելով տեղական պայմանները, աշխատանքային որվա բեռնվածությունը և աշխատանքի վորակը։

ԾՆԻ ԿԱՄՊԱՆԻԱՅԻ ՅԵՎ ՎՈՉԽԱՐՆԵՐԻ ԽՈՒԶԻ ՎՐԱ ԶԲԱՂՎԱԾ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻՆ

15. Ծնի շրջանում, կոլտնտեսության վարչությունը հովիվների բրիգադին վորպես ոգնություն 50-60 մայր վոչխարին մեկ կոլտնտեսական և առանձնացնում (ժամանակավոր գառնապահ) և բացի այդ. վորտեղ արտադրության պայմաններից յելնելով պահանջվում է. լրացուցիչ առանձնացվում են 1-2 կոլտնտեսականներ՝ վորպես կեր և ջուր փոխադրող բանվորներ, գիշերային հերթապահության ոգնականներ։

Յուրաքանչյուր կոլտնտեսական-գառնարած ամրացվում է հովվի բրիգադի բրիգադիրի (ավագ հովվի) կողմից՝ սպասարկելու վորոշ խումբ գառների իրենց մայրերով։

ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԳԱՌՆԱՊԱՀՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ

Իրեն մայրերով 15-30 գառ սպասարկելու համար ժամանակավոր գառնապահին հաշվվում է յուրաքանչյուր գառին որական 0,08-0,1 աշխոր, 30-50 գառան իրեն մայրերով՝ 0,05-0,08 աշխոր, 50-70 գառան իրեն մայրերով՝ 0.03-0,04 աշխոր, 100 և ավելի քանակի գառներին իրեն մայրերով յուրաքանչյուրին որական՝ 0,01-0,02 աշխոր, նայած գառների վորակին։

Ծանոթություն—Ծնի կամպանիան սպասարկող այլ ժամանակավոր աշխատողների աշխատավարձը սահմանվում է նայած կատարած աշխատանքի բնույթին։

16. Վոչխարները ձեռքով խուզելու դեպքում աշխատողներին աշխոր է հաշվվում՝

ա) բրդի ամբողջ յերկարությամբ և առանց խոտանի—(յերես խուզելու հետևանքով կրկնա-խուզելու) խուզած յուրաքանչյուր կիլոգրամ բրդին—0,02-,03 աշխոր.

բ) խուզված յուրաքանչյուր վոչխարի համար—0,03-0,04 աշխոր։

Անվորակ խուզ կատարելու դեպքում (վոչխարներին կարելու-վիրավորելու, խուզը վոչխարի բրդի յերկարությամբ չկատարելու և բրդի խոտան խուզի դեպքում և այլն), այդպիսի կոլտնտեսականների նկատմամբ կոլտնտեսության վարչությունը կիրառում է Գյուղատնտեսական Արտելի Կանոնադրության 17-րդ կետը։

Բուրդ տեսակավորողին աշխոր է հաշվվում խուզ անողների աշխատած աշխորների որական միջինից 10-15 տոկոսով բարձր։

Խուզի վրա զբաղված մյուս բոլոր աշխատողների (բուրդ փոխադրող, դասավորելու համար, բուրդ տվող) աշխատավարձը սահմանվում է կոլտնտեսության վարչության կողմից։

17. ՑԵՐՄԱՅԻ ՎԱՐԻՉԻՆ

ա) Մեկ բրիգադով սպասարկվող վոչխարաբուծական ֆերմայում բրիգադիրին հաշվվում են սահմանված նորմանորով աշխորեր նրան ամբացված վոչխարների սպասարկման համար և բացի այդ ֆերմայի-բրիգադի աշխատանքները ղեկավարելու համար նրան հաշվվում են լրացուցիչ աշխորեր իր աշխատած աշխորերի քանակի 20-30%-ի չափով։

բ) Այն ֆերմաներում, վորտեղ կա մի քանի բրիգադ, ֆերմայի վարիչին հաշվվում են որական աշխորեր 1-ից մինչև 1,5 աշխորի չա-

փով, նայած ֆերմայի մեծությանն, աշխատողի ստաժին և վորակին։

գ) Բացի այդ՝ տարվա վերջը ֆերմայի վարիչին հաշվվում են աշխորեր, անցյալ տարվա համեմատությամբ յուրաքանչյուր գլխից բրդի մաքուր ելքը և քաշն ավելացնելու համար, ամեն մի կիլոգրամ մաքուր բրդին 0,2-ից մինչև 0,6 աշխոր։

Որինակ՝ 1000 գլուխ վոչխար ունեցող ֆերմայում անցյալ տարվա համեմատությամբ ստացված է ամեն մի գլխին 0,1 կիլոգրամ ավելի բուրդ, իսկ ամբողջ ֆերմայում 0,1 կիլոգրամ բազմապատկած 1000=100 կգր։ Տվյալ դեպքում ՎԱՖ-ի վարիչին հաշվվում է լրացուցիչ-100 կգր. բազմ. 0,2 կամ 0,6 այսինքն 20-60 աշխոր։

18. Տեխնիկ-անասնապահին և անասնաբուժականին հաշվվում են աշխորեր յուրաքանչյուր որվա աշխատանքի համար 1-ից մինչև 1,5 աշխորի չափով, նայած աշխատանքի ծավալին, աշխատողի ստաժին և վորակին։

19. Ֆերմայի առանձին աշխատողներին (հաշվեառներին և սույն հրահանգում չնշված մյուս աշխատողներին) կատարած աշխատանքի

համար վարձատրությունն աշխորերով սահմանվում են կոլտնտեսության վարչության կողմից, հաշվի առնելով տեղական պայմանները և հաստատվում կոլտնտեսականների ընդհանուր ժողովի կողմից։

20. Գյուղատնտեսական արտելի 15-րդ կետին համապատասխան՝ յեթե վոչխարաբուծական բրիգադն իր լավ աշխատանքի հետևանքով ապահովում է բրդի ավելի խուզ, մորթիների ավելի յելք, վոչխարների բարձր գիրություն, մատղաշների լրիվ պահպանում, այդ դեպքում տարվա վերջն արտելի վարչությունն այդպիսի բրիգադի անդամների յեկամուտն ավելացնում է աշխատած աշխորերի 10 %-ի չափով, բրիգադի աչքի ընկնող հարվածայիններին մինչև 15%-ի չափով, իսկ ֆերմայի վարիչին և բրիգադիրին մինչև 20%։

Յեթե վոչխարաբուծական բրիգադն իր վատ աշխատանքի հետևանքով տալիս է մատղաշների միջակից ցածր պահպանում, վոչխարների ցածր գիրություն, մորթիների յելք և բրդի խուզ (կամ կեղտոտված և դեֆեկտավոր բուրդ), այդպիսի դեպքում արտելի վարչությունը բրիգադի բոլոր անդամներից կրճատում-պահում է նրանց յեկամտից՝ աշխատած աշխորերի 10%-ի չափով։

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է ԽՍՀՄ-Ի ՀՈՂԺՈՂԿՈՄԱՏԻ 1-Ը
ՈՍՈՍՏՈՍԻ 1938 ԹՎԻ № 1042 ՀՐԱՄԱՆՈՎ

ՀՐԱՀԱՆԳ

ԿՈԼՏՆՏԵՍԱՅԻՆ ԽՈԶԱԲՈՒԾԱԿԱՆ ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՖԵՐՄԱՆԵՐՈՒՄ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՅԵՎ ՎԱՐՁԱՏՐՄԱՆ ՄԱՍԻՆ

1. Խոզաբուծական ապրանքային ֆերմաներում բոլոր աշխատանքների կատարման համար կոլտնտեսության վարչությունը կոլտնտեսության անդամներից կազմում է վոչ պակաս 3 տարի ժամանակով, մշտական խոզաբուծական բրիգադ և ամրացնում նրան խոզեր, սպասարկման համար անհրաժեշտ ինվենտար, քաշող ուժ և անասնապահական շենքեր։

Խոշոր ֆերմաներում կազմակերպվում են մի քանի բրիգադներ, յուրաքանչյուր բրիգադ սպասարկում է մոտավորապես 21-24 մայր խոզեր, նրանցից ստացված սերունդով։

2. Բրիգադիրին և ֆերմայի վարիչին նշանակում է կոլտնտեսության վարչությունը 2 տարուց վոչ պակաս ժամանակով։

Մեկ բրիգադով սպասարկվող խոզաբուծա-

կան ֆերմայում բրիգադիրը միաժամանակ հանդիսանում է վորպես ֆերմայի վարիչ։

3. Խոզաբուծական բրիգադում բրիգադի անդամների միջև աշխատանքը բաշխում է անմիջապես ինքը՝ բրիգադիրը, համաձայն Գյուղատնտեսական Արտելի Որինակելի Կանոնադրության 14-րդ կետի։

4. Կոլտնտեսության վարչությունը սահմանում է յուրաքանչյուր բրիգադի համար տարեկան արտադրական առաջադրանքներ՝ յերբ և վորքան մայր խոզեր պետք է զուգավորվեն, ստացվեն և աճեցվեն մատղաշներ, բտվեն խոզեր և ստացվի ցենտներ կենդանի քաշ։

5. Խոզաբուծական ֆերմայում աշխատող կոլտնտեսականների աշխատանքը կազմակերպվում է գործարքի հիմունքներով, հաշվելով աշխորեր, նկատի ունենալով ստացված մթերքների վորակն ու քանակը (միս և աճեցված մատղաշներ)։

6. Գյուղատնտեսական արտելի Կանոնադրության հաստատման, կոլտնտեսության վարչությունը մշակում է և կոլտնտեսականների ընդհանուր ժողովը հաստատում խոզաբուծական ֆերմայի յուրաքանչյուր աշխատողի համար

աշխատանքի գործարքային վարձատրման չափն աշխատերով և բարեխղճորեն աշխատող կոլտնտեսականին մատչելի աշխատանքի բեռնվածության նորմաները, հաշվի առնելով անասունների վորակը և վիճակը, ֆերմայի կահավորումը և մեխանիզացիան։

7. Բեռնվածության նորմաների և վարձաչափերի մշակման ժամանակ կոլտնտեսության վարչությունը ղեկավարվում է բեռնվածության և գործարքային վարձաչափերի հետևյալ որինակելի նորմաներով։

ԳՈՐԾԱՐՔԱՅԻՆ ՎԱՐՁԱՉԱՓԵՐԻ ՅԵՎ ԲԵՌՆՎԱԾՈՒԹՅԱՆ ՈՐԻՆԱԿԵԼԻ ՆՈՐՄԱՆԵՐԸ

8. Խոզապահների համար բեռնվածության նորմաները

ա) Խոզապահը սպասարկում է մոտավորապես 7-8 մայր խոզեր իրեն սերունդով։ Սերունդը սպասարկվում է մինչև նրա վաճառելը կամ հիմնական հոտ փոխադրելը։

Խոշոր ֆերմաներում, ուր հնարավոր է առանձին աշխատողների ազատել բավող մատղաշների խնամելուց, 3-4 ամսականից բարձր ժամանակներ բուսնանց է կացվում հատուկ խոզապահի միջոցով։

Այդ դեպքում մեկ խոզապահի բեռնվածության նորման ավելացվում է մինչև 10-12 մայրի։

Խոզապահերին խոզերի գլխաքանակը լավագույն կերպով սպասարկելու պայմաններ ստեղծելու նպատակով, նախապատրաստական ու ժամանակ աշխատանքների կատարումը՝ կերի ցամքարի, վառելանյութի, ջրի փոխադրումը, գոմաղբի դուրս հանելը, ջրի տաքացնելը և այլն, դրվում է հատուկ աշխատողի վրա, վորը նույնպես հանդիսանում է վորպես խոզաբուծական բրիգադի անդամ։

Ծանոթություն—Փոքր ֆերմաներում, ուր ոժանդակ աշխատանքների համար առանձնացրած աշխատողը ֆերմայում լիովին չի բեռնավորված, կոլտնտեսության վարչությունը նրա համար սահմանում է ֆերմայից դուրս լրացուցիչ աշխատանք։

բ) Ամառային շրջանում խոզերի արածացնելու համար, ըստ կոլտնտեսության վարչության հայեցողության, խոզապահներին վորպես ոգնական առանձնացվում են խոզարածներ։

գ) Ավագ խոզապահ-բրիգադիրը խոզերի

գլխաքանակի սպասարկումից չի ազատվում։ Բացի նրան ամրացված մայր խոզերը, նա սպասարկում է նաև բրիգադին ամրացված վարազներին։

դ) Մեկ բրիգադով սպասարկվող ֆերմայում, վորտեղ բրիգադիրը հանդիսանում է միաժամանակ և վորպես ֆերմայի վարիչ, և յերբ ֆերմայում կան վոչ պակաս քան 15 մայր խոզեր՝ նա ազատվում է մայր խոզերի նախրի անմիջական սպասարկումից։

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԱՐՁԱՏՐՈՒՄԸ

Խոզապահին հաշվվում են աշխատրեր՝

Ա. Խոճկորների աճեցման համար

Խոզապահին ամրացված մայր խոզերից անջատած յուրաքանչյուր առողջ խոճկորի համար՝

Մինչև 12 կգր. կենդանի քաշ ունեցողին—2,5 աշխոր.

12 կգր.-ից ավելի կենդանի քաշ ունեցողին 4,5 աշխոր։

Բացի այդ, խոզապահին ամրացված յուրաքանչյուր մայր խոզից տարվա ընթացքում անջատած 12 խոճկորներից ավելի ամեն մի խոճկորի համար լրացուցիչ հաշվվում է 1,5 աշխոր։

Բ. Կենդանի քաշի աճի համար

Յուրաքանչյուր ցենտներ կենդանի քաշի համար 10-ական աշխոր։

Բացի այդ լրացուցիչ հաշվվում է աշխոր՝

ա) Յուրաքանչյուր բտված խոզի համար, կենդանի քաշով վոչ պակաս 80-100 կիլոգրամից—5 աշխոր.

բ) Ելիտ և 1-ին դաս յուրաքանչյուր տոհմային մայրացու խոզի համար, վաճառված վոչ պակաս քան 4 ամսական հասակում—5 աշխոր։

Կենդանի քաշի աճի համար աշխատրերի հաշվվումը կատարվում է՝ պետությանը մսի պարտավորության հաշվին խոզեր հանձնելու, ֆերմայից խոզեր և խոճկորներ վաճառելու, մայրացու մատղաշների և վարազիկների հիմնական հոտ փոխադրելու ժամանակ և կոլտնտեսության կարիքների համար խոզեր մորթելիս։

Ծանոթություն—Այն ֆերմաներում, վորտեղ կիրառվում է խոզերի ամենամյա կշռելը, կամ վորոնք ունեն հնարավորություն կազմակերպելու այդպիսի կշռումներ, կենդանի քաշի աճի համար աշխատրերի

հաշվումը կատարվում է խոզերի կշռելուց հետո և անց վաստացի կենդանի քաշին համապատասխան։

9. Ֆերմայի վարիչի յուվ բրիգադիրի համար

ա) Այն ֆերմաներում, որտեղ կան 15 մայր խոզերից պակաս գ խարանակ, ֆերմայի վարիչ-բրիգադիրին և խոշոր ֆերմաներում բրիգադիրին ամրացված խոզերի և նրանց սերունդի սպասարկման համար աշխատերի հաշվումը կատարվում է խոզապահների համար սահմանված վարձաչափերով։

Բացի այդ նրանց ամրացված արտադրողվարազների համար յուրաքանչյուր զուգավորված բեղմնավորված) մայր խոզին հաշվվում է 1,5 2,0 աշխատ։ Ֆերմայի-բրիգադի աշխատանքները ղեկավարելու համար լրացուցիչ հաշվվում է աշխատ նրանց աշխատած աշխատերի քանակի 20-30 %-ի չափով։

բ) Եթե ֆերմաներում վարիչին հաշվվում է աշխատ որական աշխատանքի համար 1-ից մինչև 1,5 աշխատի չափով, նայած ֆերմայի չափին, աշխատանքի ստաժին և աշխատողի վարձակին։ Բացի այդ, ֆերմայի վարիչին հաշվվում է աշխատ կենդանի քաշով վոչ պակաս 80-100 կգ-

յուրաքանչյուր բուծած խոզի համար 1-2 աշխատ։

10. Տեխնիկ-անասնապահին և անասնաբուժակին հաշվվում է աշխատ յուրաքանչյուր որվա աշխատանքի համար 1-ից մինչև 1, աշխատի չափով, նայած աշխատանքի ծավալին, աշխատողի ստաժին և վարձակին։

11. Ֆերմայի մնացած աշխատողներին (ոժանդակ աշխատողներին, հաշվեառներին և սույն հրահանգում չնշված այլ աշխատողներին) կատարած աշխատանքի համար վարձաչափերն աշխատերով սահմանվում են կոլտնտեսության վարչության կողմից, հաշվի առնելով տեղական պայմանները և հաստատվում կոլտնտեսականների ընդհանուր ժողովի կողմից։

12. Գյուղատնտեսական արտելի 15-րդ կետի համապատասխան՝ եթե խոզաբուծական բրիգադն իր լավ աշխատանքի հետևանքով ապահովում է անասունի բարձր դիրություն, մատղաշների լիովին պահպանում, այդ դեպքում տարվա վերջն արտելի վարչությունն այդպիսի բրիգադի անդամների յեկամուտն ավելացնում է աշխատած աշխատերի 10%-ի չափով, իսկ ֆերմայի վարիչին և բրիգադիրին մինչև 20%։

Ցեթե խոզաբուծական բրիգադն իր վատ աշխատանքի հետևանքով տալիս է անասունից ցածր գիրություն և մատղաշների վատ պահպանում, այդպիսի դեպքում արտելի վարչությունը բրիգադի բոլոր անդամներից կրճատում պահում է նրանց յեկամուտից՝ աշխատած աշխորների 10%-ի չափով։



Թարգմանեց՝ Բ. Մամյան
Պատ. խմբագիր՝ Մ. Ասլանյան
Տեխ. խմբագիր՝ Լ. Ոհանյան
Սրբագրիչ՝ Մ. Մարտիկյան

Գլավլիտի լիազոր՝ Տ—1652 Հրատ № 4757.
Պատվեր 83. Տիրաժ 8500

Հանձնված է արտադրության 11 նոյեմբերի 1938 թ.
Ստորագրված է տպագրության համար 11 դեկտ. 1938 թ.

Պետհրատի I տպարան, Ցերևան, Լենինի 65.

36

ՀՀ Ազգային գրադարան
NL0977695

1
3802

ИНСТРУКЦИЯ

по организации и оплате труда в товарно-животноводческих фермах

Гиз Арм. ССР, Ереван, 1939 г.